Արձանագրություն N 2
ՋԿ-ԲՄԽԾՁԲ-25/3-Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23 հոկտեմբերի 2025թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բաղալյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Ալեյանը, Ն. Մանուկյանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Արճիս, Այրում և Հաղթանակ բնակավայրերի տարածքներում Դեբեդ գետի հունի մաքրման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԲՄԽԾՁԲ-25/3-Ն ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2025 թվականի հոկտեմբերի 20-ին, ժամը 16:00-ին (հրապարակվել է 19.09.2025թ.-ին):

Հրավերում կատարված փոփոխություններ

ՋԿ-ԲՄԽԾՁԲ-25/3-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

ՋԿ-ԲՄԽԾՁԲ-25/3-Ն ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ	ք. Երևան, Ավան-Առինջ, 1-ին միկրո. 1/7, 5 091 333032	tender@bime.am
«Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ	ք. Երևան, Արմենակյան 125/3 099 426236	jhhi@jhhi.am

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 **Գնման գին – 4 400 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Արճիս, Այրում և Հաղթանակ բնակավայրերի տարածքներում Դեբեդ գետի հունի մաքրման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ				
1	«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ	2 880 000	0	2 880 000
2	«Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ	3 480 000	696 000	4 176 000

Մասնակց(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԲՄԽԾՁԲ-25/3-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակից **«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ի** հայտով ներկայացված Դիմում հայտարարության մեջ (Հավելված 1) իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը ակտիվ չէ: Հայտով չեն ներկայացվել՝ հրավերով պահանջվող «Պիտանելիության չափորոշիչ» որակավորման չափանիշով սահմանված՝ լիցենզիան (ներդիրը) բնօրինակից արտատպված, «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով սահմանված նմանատիպ պայմանագիրը (կամ պայմանագրերը) և դրանց պատշաճ ձևով իրականացված լինելու վերաբերյալ փաստաթղթերը: Չեն ներկայացվել «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով սահմանված՝ իր կողմից հաստատված տեղեկանքը՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի մասին՝ համաձայն Հավելված N 1.3-ի և կից աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորող փաստաթղթերը:

Մասնակից **«Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ-ի** հայտով ներկայացված Դիմում հայտարարությունում (Հավելված 1) մրցույթը կազմակերպող մարմնի անվանումը սխալ է նշված: Հայտով չեն ներկայացվել՝ հրավերով պահանջվող «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով սահմանված նմանատիպ պայմանագիրը (կամ պայմանագրերը) և դրանց պատշաճ ձևով իրականացված լինելու վերաբերյալ փաստաթղթերը: Հավելված 1.3-ում՝ Աշխատակազմում ներառված մասնագետների մասին տեղեկատվությունում՝ մասնագետների աշխատանքային փորձի ժամանակահատվածը հստակ չի նշված:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԲՄԽԾՁԲ-25/3-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Համաձայն ՋԿ-ԲՄԽԾՁԲ-25/3-Ն ծածկագրով հրավերի 8.9 կետի, մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակիցներ **«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ին** և **«Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ-ին՝** մինչև կասեցման ժամկետի ավարտը **(24.10.2025թ. ներառյալ)** շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Է. Բաղալյան
անդամներ	_____	Կ. Ալեյան
	_____	Ն. Մանուկյան
	_____	Ս. Աբազյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան